

պտղապատ, հարուստ դաշտեր, — այսպէս է վրայում մեր մեծ մարդկանց գործունէութիւնը։
Միայն թէ չը մոռանանք ամենազգաւորը ժողովուրդը աննշակ հող է. քանի չը կան հերկողներ, պատրաստողներ, մշակողներ, նա ամայի է, բայց հենց որ աշխատանքը, անձնուէր ծառայութիւնը դիպչում է նրան, նա հրաշքներ է ցոյց տալիս։

Հաւատանք ագնիւ, սուրբ աշխատանքին, որքան էլ դառն ու աննպաստ լինի նա Աշխատանքը, աշխատանքը։ Ձեռք ձեռքի տուած, ընթերցող, միմեանց նեցուկ, միմեանց պաշտպան, փոխադարձ համակրանքի և վստահութեան մէջ ոյժ ու տոկոսութիւն գտնելով։

Այն ժամանակ երկինքը կորչէ մեր հունձը, Հաւատանք, ինչպէս հաւատացել են մեր գործիչները։ Հաւատանքը ճերմակագործութեամբ։ Առանց հաւատի մեզանում չէ տեղի ունեցել նոյն իսկ մի ամենափոքրիկ քայլ դէպի առաջ։

Միշտ կենդանի, միշտ անընչ պահել այդ հաւատը — ահա ինչ են ցանկանում ձեզ, բարեկամ ընթերցող, իմ ամբողջ սրտից։
Տարին վերջացան, մենք միմեանց պիտի հրաժեշտ տանք։ Շնորհակալ եմ ձեզանից. մի ամբողջ տարի դուք լուսւ էինք ինձ, ուշադրութիւն էիք նուիրում ինձ։ Եւ լի ու լի ստացել եմ վարձատրութիւն ձեզանից և զգացել եմ, թէ ինչ անգին ոյժ է, ինչ մեծ գործո՞ւն է բարեկամ ընթերցողը։ Նորից կը հանդիպեմք իրար։ Ինչ էլ լինի — միասին թէ շուկ-շուկ, հետո թէ մօտիկ, իրար հաւատանք, միշտ հաւատանք և աշխատանք։

Մ Ա Տ Ե Ն Ա Վ Ի Ռ Ի Թ Ի Է

Коллекция Кавказского Музея.—Die Sammlungen des Kaukasischen Museums.—Томъ V. Археология, Типографъ, 1902.

Մենք արդէն յայտնեցինք, որ այս օրերս լոյս տեսաւ Թիֆլիսում Կովկասեան Մուզէոնի և Գրադարանի վերատեսուէչ զօլտօր Բարդէի և մի քանի գիտնական մասնագէտների խմբագրութեամբ ու հրատարակութեամբ Կովկասեան Մուզէոնի ժողովածոների նկարագրութեան V հատորը, որ պարունակում է յատկապէս հնագիտութիւնը և կազմել է կոմսուհի Ուլարովան Գիտնական տիկնոջ այս պատկանելի աշխատութիւնը, որ գրված է ռուսերէն, և հրատարակված միաժամանակ գերմանական թարգմանութեան հետ (թարգմանութիւնը կատարել է զօլտօր Բարդէի)։ Ներկայացնում է մի խոշոր գանձ Կովկասի հնագիտութեան, նախնական — անդր պատմական շրջանի պատմութեան համար և թէև նա բոլորովին մասնագիտական բնագործութիւն ունի, բայց նրա առաջաբանը ներկայացնում է և ընդհանուր հետաքրքրութիւն բոլոր այն անձանց համար, որոնք զբաղվում են Կովկասի և մասնաւորապէս հայոց ու վրաց պատմութեամբ։

Այդ առաջաբանի վրա և կանգ կառնենք մենք։ Մեր հրաշայի Կովկասը — ասում է կոմսուհի Ուլարովան — մի տեսակ առասպելական-տիւտանական ձգող ոյժով ներգործել է միշտ հին աշխարհի բոլոր ազգերի վրա, որոնց մեծ մասը կապված են նրա հետ անցողութիւններով, առասպելներով, հեքիաթներով։ Աստուածաշունչը մասնացոյց է լինում Արարատի վրա, ասիական թագաւորները թողնում են Արաք — մի հովտում և Սևանի լճի ափերին սեպածն արձանագրութիւններ, որոնք յայտնում են Ուրարտի ազգի վրա տարած յայթորութիւնների մասին։ Պարսկական տիրապետութեան ժամանակ Անդրկովկասը կազմում էր 18-րդ դարի սկզբները, իսկ Ալեքսանդր Մեծի յաջորդների ժամանակ գլուխ է բարձրացնում Հայաստանը, ընդարձակում է իր սահմանները մինչև Բաբելոն և իր հզօրութեամբ, հարստութեամբ առաջ է բերում հռոմայեցիների թշնամութիւնը և արշաւանքները։

Ապա, պատմելով յաջորդաբար բիւզանդացիների, արաբների, մոնղոլների, գենուաղիների, թիւրքերի և պարսիկների արշաւանքները ու տիրապետութիւնը և ռուսների վերջնական գրաւումը, կոմսուհին անցնում է նկարագրելու մանրամասն այն ամենը, ինչ որ արված է Կովկասի հնութիւնների մշակութեան և գիտնական ուսումնասիրութեան մասին, սկսված XVIII-րդ դարից մինչև այսօր։ Եւ մենք տեսնում ենք, որ հեղինակը խոր և լուրջ կերպով ծանոթ է իր առարկային և մասնաւորապէս հայոց ու վրաց պատմութեան հետ։

Այդ նկարագրութիւնից երևում է, որ Կովկասի հնութիւնների մշակումը և գիտնական ուսումնասիրութիւնը մենք ամբողջովին պարտական ենք ռուսաց կառավարութեան, որը

դեռ XVIII-րդ դարում զբաղեց եւրօպացի գիտնականներին դէպի այդ ուսումնասիրութիւնը, յանձին Գիւրգենյանի և Ռէյնէլի, որոնց աշխատութիւնները տպւեցին Պետերբուրգում 1791 և 97-ին XIX դարի սկզբին, 1810-ին, երբ տասարդ գիտնական Ս. Ուլարով, ապագայ, յուսմիկաւոր ժողովրդական լուսաւորութեան, ներկայացրեց Ալեքսանդր I կայսրին յիշատակագիր Ասիական Ակադեմիայի հաստատութեան մասին և դրանով հիմն դրեց արեւելքի և նրա նախադրուին — Կովկասի կանոնաւոր ուսումնասիրութեան հարցին։

Ուլարովի ջանքերով հիմնվում են արեւելեան ֆակուլտետներ համալսարաններում, արեւելեան բաժանումներ գիտութիւնների ակադեմիային կից, Ասիական Միւզէոն և զործակցութեան է հրաւիրվում յայտնի արեւելագէտ, Կազանի համալսարանի պրոֆէսոր Պրէն Կազանի համալսարանի Արեւելեան ֆակուլտետի մեծ հոգակէր ստացել այդ ժամանակ և նա մեծապէս նպաստեց Արեւելքի ուսումնասիրութեան խնդրին։ Պրէնի օգնականներ և աշխատակիցներ ու ապագայում նրա գործը շարունակողներ եղան արեւելագիտութեան և կովկասագիտութեան մէջ — Շարոտա և Դորն, Սենկովսկի, Քեպուրե-ժէկ, Սանկով, Գրիգորիւկ, Բարտոլոմէյ, Սալեյիւկ, Բրոսե, որ իր գիտնական գործունէութեան 50 տարին նուիրեց Վրաստանի և Հայաստանի ուսումնասիրութեան, Շէքերէ, իսկ Ռուսաստանից դուրս, բայց դարձեալ Ուլարովի հրաւերով — Կապուտ, Բիտտեր, Մարտէն, Դիւրուա-դը-Մոնպէրէ և ուրիշները։ Բոլոր այս յիշատակված գիտնականները զանազան գնահատելի և թանկագին աշխատութիւններ ունեն հրատարակած Կովկասի, Հայաստանի, Վրաստանի պատմական, ազգագրական, լեզուագիտական ճիւղերի մասին, որոնց ցուցակը կոմսուհի Ուլարովան մի առ մի առաջ է բերում։

Դրանցից յետոյ Կովկասի և գլխաւորապէս Հայաստանի ուսումնասիրութեան պարապում են — Շոպէն, Էմին, Վենետիկ Միխիլայիւսի վարդապետներ Դուկաս Ինճիճեան, Դանդ Ալիշան, հայ եպիսկոպոսներ՝ Յովնանէս Եան-Խաթունեան, Մարգիս Զալարեան, Աբէ Միխիլայիւսի, Մեսրոպ Սմբատեան, և այլք։ Սրանց աշխատութիւններն ևս հեղինակ-տիկնոյն մի առ մի թւում է։

Վրաստանի և Կովկասի յիշատակագրանքների հետազոտութեամբ պարապվում են Իստեյնանի, Բերդէ և ռուսաց աշխարհագրական ընկերութեան Կովկասեան ճիւղը, իսկ ապա — Բաբրա-ձէ, Բալայի, Վելյուքեան, Զաքարիայի, Երեմիան, Կոնարով, Պրոքորով, Պրոքորով, Միխիլայիւսի, Անտոնովիչ, Անուշին, Բերնշտայն, Պրոքորով, Բուսով, Ֆելիցան, Շոպէն, Յիւրսին և այլք։

Բոլոր այդ հետազոտողների աշխատութիւնների մասին տեղեկութիւններ տալուց յետոյ, կոմսուհի Ուլարովան բաժանում է նրանց զանազան մասերի, դասակարգում է ճիւղերի, այն է՝ 1) Նախնական ցարգական հնութիւններ, 2) Գանգեւրի ցարգական, 3) Ազգագրութիւն և լեզուագիտութիւն, 4) Եկեղեցական հնութիւններ և ճարտարապետութիւն և յիշատակարաններ, 5) Սեպածն և արձանագրութիւններ, 6) Գրութեան յիշատակարաններ։ Ապա յիշատակում է բոլոր այս ճիւղերի մէջ գործող գիտնականներին և վերջացնում է վերջին ժամանակներս կատարված Մօրգանի, Բելիկի և Լեմանի հետազոտութիւններով։

Կոմսուհի Ուլարովայի ներկայ աշխատութիւնը, որ պարունակում է Կովկասի գանձաւոր նախնական գտնված և թանգարանի մէջ ի ցոյց դրված 3503 հնագիտական առարկաների նկարագրութիւնը, և 18 հատ մեծ նրկարներ, մի գեղեցիկ և թանկագին օժանդակ է ոչ միայն Կովկասի, այլ և մասնաւորապէս Հայաստանի և Վրաստանի հնագիտական ուսումնասիրութեան համար։

Հ. Ա.

Նոր ստացված գրքեր.—1) Քորոս Լեւոնի, Մերենցի, երկրորդ հրատարակութիւն, Կովկասեան գրավածաւանդի 2, Գրիգորեանցի, Թիֆլիս, 1902 թ. գինն է 50 կոպէկ. 2) Մուսա, պատմական պոէմ (1722—1724) նուագ առաջին, Յարութիւն Թումանյանի, Թիֆլիս, 1902 թ. գինն է 20 կ. 3) Գրիգոր Զանգեան, ռուս մամուլի էջերում, թարգմանեց Գեորգ Զախ. Միլտոմանց, Ս. Պետերբուրգ, 1902 թ. գինն է 35 կ. 4) Նուագներ, Յար. Թումանյանցի, Թիֆլիս, 1902 թ. գինն է 30 կ., 5) Մարի խորհրդից (Բանաստեղծութիւններ), Կ. Սեմիոնով, Թիֆլիս, 1902 թ. գինն է 10 կ. 6) Ներկայից և պետութեան յարաբերութիւնները հեղինակութիւն պրոֆէսոր Սուլթովի, թարգմանեց Պետրոս Տէր-

Յարութիւնեան, խմբագրութեամբ Ս. Տիգրանյանի, Վարդապատ, 1902 թ. գինն է 30 կ. 7) Ուսումնասիրութիւն (երեխաների համար), պատկերազարդ, Էմանուէլ Զախանայ Նազարեանցի, Մոսկւա, 1903 թ. գինն է 50 կ. 8) Հաստատական օրացոյց 1903 թ., հրատարակութիւն Ա. Ս. Գուլամիւսի, Ե. տարի, Երևան, 1903 թ., գինն է 45 կ. 9) Օրացոյց 1903 թ., Ժէ. տարի, հրատարակութիւն Ա. Ս. Գուլամիւսի, Երևան, 1902 թ., գինն է 15 կ. 10) «Объ установлении надзора за дойными животными, д—ра Г. Н. Степанова, Типографъ, 1902 г. 11) Յայտագիր «Պատմագիրը հայոց» հրատարակութեան մասին», 1902 թ., Թիֆլիս, 12) Զուգեմոսնո 3ուգեմ Զահեմնո, Մոսկւա 1902 թ.

ՏՈՆԵՐԸ ԳԱՆԻՍ ԵՆ

Մի խումբ մանուկների մէջ իրարանցում, ուրախութիւն է տիրում։ Նրանք մեծ պատրաստութիւնների մէջ են. չը նայած ցոյցին ու քառու, դարձեալ դուրս են վազում փողոց, այս խանութից այն խանութը մտնում իրանց ծնողների հետ, կանգնում չքեղ զարդարված խանութների առաջ, նայում ցուցահանդէսում կախած կամ դարսած խաղալիքներին, փայլուն, գոյնգոյն իրերին, դատողութիւններ անում, յետոյ ներս մտնում, վերցնում, չօտփում, փափուկ, փոքրիկ ձեռքերի մէջ այս ու այն կողմը պտտեցնում, ապա հուսնում ծնողներին ցոյց տալիս, որ գնեն։ Յետոյ ուրախ-ուրախ դուրս գալիս խանութից, թուղթերով, քաղցր-քաղցր խօսելով շարունակում իրանց ճանապարհը, երբեմնակի մտնելով պատահած խանութը նոր զգեստ, կոշիկ, խաղալիք գնելու, որ ուրախ սրտով, զուարթ երեսով տուն վերադառնան, զուարճանքին տանք մնացած եղբայրներին և քույրերին ու նրանց հետ միասին և օգնութեամբ պատրաստվեն տօներին հանդիպելու։

Այո, ուրախ են այդ մանուկները, որովհետև մօտենում է նոր տարին, տարվայ մեծ մանկական տօնը, երբ չըպատկած են լինում ամեն տեսակ խաղալիքներով, քաղցրաւորներով և մօտերի ընկերների հետ տօնածառը բոլորած երգում են։

Ահա հասաւ նոր տարին

Հետք բերաւ նոր բարին...

Բայց դուք որոնք հակապատկերն է ներկայացնում իրանց տիրութեամբ նոյնպէս մանուկների մի ուրիշ խումբ։ Դրանք չքառու, անտուն-անտէր երեխաներն են, որոնք նոյնպէս խանութից խանութ, փողոցից փողոց են անցնում, բայց ոչ թէ մի բան գնելու, մի խաղալիքով միխիլայիւսի համար, այլ միայն հետեւում են իրանց բախտաւոր հասակակիցներին, և հետուից, թուղթեր կուլ տալով, ակահատես լինում նրանց ուրախութեան. և երբ առաջինները կուշտ և զուարթ կերպով պէտք է երգեն և զուարճանան, երկրորդները քաղցած, մեղի, բոկոտն և դակացած դէմքով պէտք է մտնեն իրանց նոյնպէս չքառու, խղճուկ, ցուրտ ու խնամ սենեակը և տխուր սրտով ողբան իրանց սե օրը... 26-րդ դարի օրերին է չքառութիւնը իր ամբողջ տղերութեամբ և դաժան դէմքով կանգնում իր գոնի առաջ...

Բայց այս վերջիններս միայնակ չեն. նրանք ևս ունեն իրանց համար մտածողներ, իրանց բարեկամներ, որոնք, չը նայած իրանց սուղ միջոցներին, աշխատում են, գոնէ մասամբ, ամոքել նրանց, արել նրանց արտասուք և միխիլայիւսի անբախտ մանուկներին գէթ շատ կարճ ժամանակով։

Սրանք մեր մի խումբ վարժուհիներն են, որոնք թողած իրանց առօրեայ հոգսերը, զբոսը վերով իրանց ազատութիւնից, յանձն են առել կիրակները հաւաքել այդ խղճ և դուրսը մնացած մանուկներին միասնեղ, սովորեցնել նրանց մայրենի լեզուն, կրօնը և այժմ էլ աշխատում են չը թողնել անմխիթար, նախորդ տարիների նման, նրանց համար էլ կազմեն տօնածառ, որ գոնէ նրանց մի փոքրիկ մասը ուրախանան և զուարճանան այս մեծ տօներին...

Մական ինչով, երբ ընկերութեան միջոցները այնքան սուղ են, որ անկարող է ամբողջովին ծախսել իր վրա վերցնելու, ուրեմն և նա յոյսը դնում է ընդհանուր օժանդակութեան վրա, որ և կարծում ենք լիովին կարգաւորապէս թող մեր հասարակութիւնը իրան յատուկ բարեարտութիւններ այս մեծ տօներին յիշէ թէ՛ շուտ երեխաներին և իր առատ նուէրներով գէթ մի փոքր թեթեւացնէ նրանց ծանր վիճակը և արէ նրանց արտասուելից աչքերը։ Նուէրներէց է կախված և միխիլայիւսի մանուկների քանակութիւնը։

Մեր փափկասուն տիկնիկները վրա է դրված

մեծ պարտքը, իրեն գործագութ մայրերի, որոնք իրանց գաւազների գոտարճութեան համար գոհում են ամեն ինչ. թող այդ գոնի մի չնչին մասն էլ բաժին հանեն այս խղճուկներին, որով սրանք լիովին բաւականութիւն կը զգան։

Հաշ.

ԳՐԱԾԱՐԱՒԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Հինգրայթի, դեկտեմբերի 26-ին, կառավարութեան թոյլտուութեամբ, Թիֆլիսի վրաց Հրատարակչական ընկերութեան տպարանում կայացաւ գրադարական առաջին երեկոյթը Թիֆլիսում։ Երեկոյթը ընտանեկան բնաւորութիւն էր կրում, թէև կային հրաւիրվածներ և ուրիշ տպարաններից։ Տպարանի ամենամեծ սենեակի վերին մասում չինված էր մի գեղեցիկ բեմ, որի վարագոյրի մէջտեղը նկարված էր Գուտտենբերգը, իսկ նրա աջ և ձախ կողմը տպարանական գործիչներ և երկու խումբ գրադարներ աշխատելիս։ Ամբողջ դահլիճը լրացված էր թէ գրադարներով և թէ նրանց ընտանիքներով։ Երեկոյթի պրօգրամը շատ աջող էր և համապատասխան Նուագում էր գինուրական երաժշտական խումբը։ Ներկայացրին երեք ծիծաղաւոր փողովները. նախ՝ ռուսերէն լեզուով — «Բարիկոտեան խանութները», յետոյ վրացերէն լեզուով — «Մագարիկի ճիւղը» անունով փողովներ, իսկ յետոյ ներկայացրին հայերէն «Միրահարը սեղանի տակ» փողովներ։ Դերակատարները բոլոր գրադարներ էին, բացի մի քանի հրաւիրված օրիորդներից, որոնք կատարում էին կանանց դերերը։ Բոլոր դերակատարները իրանց դերերը կատարեցին շատ գեղեցիկ և նուրբ կերպով, որ չէր կարելի սպասել ֆիգիլական աշխատանքի տակ ճնշված գրադարներից։ Մի՞թէ, ծափահարութիւններ խանութում էին իրար 26-րդ դար, որ տպարանը լցված էր ահայտ բազմութեամբ, բայց կարգապահութիւնը կատարւած էր։ Ներկայացումից յետոյ սկսվեց դիվերտիսմենտը։ Խմբով երգեցին մի քանի երգեր, կարդացին մի քանի յարմար գրուածքներ։ Ապա գրադարներից մէկը սկսեց նուագել դիվերտիսմ, իսկ երկու հոգի անում էին մանդոլինի վրա, որոնք խնայեցին պատճառեցին հանդիսականներին։ Այդ ժամանակ գրադարներից մէկը շատ չորհրդով երգեց մի քանի կուպլետներ։ Ամենից վերջը տեղի ունեցան եւրօպական և ասիական պարեր։ Երեկոյթը վերջացաւ գեղեցիկ ժամի 3-ին։

Մեծ շնորհակալութեան արժանի է ապարանի կառավարիչ պ. Ալեքսանդր Զաքարիայի, որ երեկոյթը կազմելու համար չը խնայեց և նիւթական զոհաբերութիւն։

Շատ ցանկալի է, որ մեր միւս տպարանատէրերն էլ հետեւին այս օրինակին և միջոց տալին իրանց գրադարներին այսպիսի ներկայացումներով։

Ս. Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պետերբուրգ, նոյեմբերի 7-ին
«Մշակի» 243 համարում կարդացի, որ շատ տեղերից և ի միջի այլոց նաև հայ գիտնականների կողմից խնդրում են ձեզ ձեր ուղարկել նրանց «Մշակը»։

Ուղարկելով տաւ ռուբլի, խնդրում եմ զայ 1903 տարվայ ընթացքում «Մշակը» ուղարկել իմ կողմից, իրեն ծերունի գինուր-խմիկից, այն հայ գիտնականների խմբին, որին դուք ինքնորդ կը բարեհաճէք։

Գնդապետ Սարգիս Իւզընյան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոֆիա, նոյեմբերի 16-ին
Ժողովելով Սոֆիա-Թիֆլիս ճանապարհի պատմային կայարաններից հինգ ռուբլի, իմ ծանօթ ընկերից հինգ ռուբլի և իմ կողմից աւելացնելով տասն ռուբլի — բոլորը ջանք ռուբլի, — ուղարկում եմ խմբագրութեանը և խնդրում եմ բաժանել, բայց ձեր բարեհաճեցողութեան, կարօտեաններին տասն ռուբլի, և մի օրինակ «Մշակը» լրագրի 1903 թ. յունիսի մէկից ուղարկել Մեծ-Նարաբախայի գիւղի հասարակութեան Յակովբ Նազարեանցի անունով։ Ի միասնութեան խնդրում եմ այս մասին հրապարակով յայտարարել «Մշակի» միջոցով։

Կառավարիչ Սոֆիա-Թիֆլիս ճանապարհի պատմային կայարանների Ս. Յակովբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարվայ սեպտեմբերի 30-ին սկսվեցին

1870